

Ա Ր Մ Ա Բ Ա Ր Մ Ա Տ

ԱՄՍԱԳԻՐ


ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԹԻԻ Ե. ՍԵՊՏԵՄԲԵՐ

1869

Բ. ՏԱՐԻ

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն



Ի մեծի աւուր Յայտնութեան Քրիստոսի, վերլուծութիւն ըսինն Եսայեայ, յետ որոյ եւ հաւարմունք աստուածաշունչ ըսնից Թարգման յարինեալ ի խորհուրդ Թագաւորաց որ յերկրի, արագ ցուցմամբ եւ իմաստասիրական սահմանաւ շարադրեալ Վահրամ վարդապետի, յորում աւուր աւծեալ ձեռնադրեցաւ Թագաւորն Հայոց Մեծն Ղեւոն

(Շորոնդիւն և վերջ)

Վ.Ա.Ս.Ն. ԻՇԽԱՆԱՅ: Աւ արդ չէ բաւական առողջութիւն զլեցոյ միայն ՚ի կատարելութիւն կենդանոյ*, այլ և ամենայն անդամոցն յարմարութիւն: Այսպէս և ՚ի հաստատութիւն աշխարհի՝ ընդ Թագաւորին գեղեցկութեան և լաւագոյնութեան՝ պիտանացու

է և իշխանացն բարիորդ գոնն Վանգին յերանկէն Մողոմանի քաղաքս Թագաւոր բարիորդ ունելոյ, և զիշխանաց ևս վարդապետաց* յիշէ: Արպէս և յորժամ զթշուառութեանէ ճառէ, զնորին վասն ըստ մտաց և ըստ մարմնոյ մանուկ գոլոյ, նորին արքայի, և զիշ-

(*) Գուցէ ինքնաշնորհ:

(*) Գուցէ զարքայոց:

597

խանացն ևս յիշէ, թէ "ընդ առաւաւտս ուտեն. այս է, որովայնի ծառայեալք, ընդ առաւաւտս ուտեն և զհետ լինին զինոյն, և երկեղյանան 'ի նմին, և 'ի դործս Տեառն ոչ հային որպէս ասէ Ասայի, "ոչ պարսպեալք խորհրդոյ և պահպանութեան աշխարհին": Ասանորոյ ըստ աւրինի թագաւորի՝ ամենայն բարիք ճանապարհի և գործառնութեան նախանձաւորք լինիցին: Ասի բարեպաշտութեամբ առ Աստուած պայծառնալ, որպէս զի հաւատարմութեամբ երկնաւոր թագաւորին՝ հաստատուն երեւցի հաւատարմութիւն երկրաւորս թագաւորի. զի որ երկնաւոր թագաւորին՝ յորմէ զգոն ունի և զբարիք գոն և զկնի անցաւորիս, զվերստին նորոգիլն և զյաւիտենական կեանսն և զընդդիմակաց նոցա զերկեղ: Աւ զպատուիրանս նորա ոչ պահելով, ոչ գտցի հաւատարիմ առ նա, զի արդ երկնաւոր թագաւորի հաւատարիմ գտցի, յորմէ սակաւ ընդունի զբարութեան կամ զբարկութեան արկածս: Այնպէս պարտ է նոցին խոնարհութեամբ և ամենայն առաքինութեամբ զարդարուն և բարեձև երևիլ: Մանաւանդ սէր սերտ ունելով առ թագաւորն և առ միմեանս, մի՛ նախանձիլ ընդ փառս և ընդ յառաջադիմութիւն իրերաց, և մի՛ մախանաւք այրիլ զերեարս խաճատել և 'ի միմեանց սատակիլ: Օ, ի այս ախտ յորովագոյն գտանի սա նոսին, առաւելապէս յորժամ զընկեր պատուեալ տեսանիցեն. առ որս ստիցէ որ, թէ այր դու ընկեր, նախանձով ծնկիս և հաշիս ընդ բարձրանալ եղբաւրքոս թէ ախորժիս հանգչել, անձին քում համարեա՞ զնորին բարին. այլ և սա քեզ խորհրդակից զԱստուածաշունչ զիրս՝ մանաւանդ զՎաւթի, և ոչ երկիցես յորժամ մեծանայ մարդ. և բազում լինի փառք տան

նորա ընդ նմա. զի ոչ իջցեն ընդ նմա 'ի գերեզման: Օ, ի մարդոց որպէս խոտոց են աւուրք իւր. որպէս ծաղիկ վայրի՝ այնպէս ծաղկի. շնչէ 'ի նա հողմն և ոչ է, և ոչ ևս երևի տեղի նորա. և զայլս որ համազաւր են սոցին: Ապա թէ այսու ոչ հաւանիս, և մեծագոյն զփառս և զփարթամութիւն կենցաղոյս կարծիցես, արա՞ ընտրութեամբ հաւանութիւն և հանդարտութիւն մտաց քոց. զի թէ նովաւ և նորին հնարիւք և ջանալով է յաջողումն նորա և յառաջադիմութիւն, մարդ ես՝ բանի և խորհրդոյ վիճակեալ, արա՞ զմանազոյնն դու զնորա զմաստութիւն և զքաջութիւն և զայլն, և բարձրացիս նմանապէս 'ի նորին փառս և ի պատիւ: Ապա թէ բաւականն 'ի բարձանց բաժանեաց զայն ունել նմա որպէս ասէ Յոր. "ի բնութեան ունել զլաւսն, և 'ի ստեղծման և հոգին բաժանէ", որպէս ասէ Պաւղոս՝ "ումնին բան իմաստութեան, այլում զաւրութիւն", և այլոց զայլն, ըստ չափոյ հաւատոցն յաջողեալ. տես այր դու, մի՛ դուց (զուցէ) ընդ մարդ հակառակելով, աստուածամարտ գտանիցիս. զի ո՞վ է նա՞ որ 'ի քէն դատախտեալ լինի, շնորհին աւգուան քե՞զ է, և տքնելն 'ի նմին, և պատասխանի տալն Աստուծոյ 'ի վերայ նորա. վասնորոյ լուեա՞ ի բարկութենէ և հանգիր 'ի սրտմտութենէ: Գարձեալ և մի՛ ոխս միմեանց ունել. զի թէ որ մեղաւ քեզ և դեռ ևս յերկեղի ես, մաղթեա՞ զԱստուած, աղաչեա՞ և զայն սա որ և զկասկածանսն ունիցիս. և հաշտեա՞ ընդ նմին՝ թէ և յընչեց քոց հասանէ տալ. զի ասէ Սողոմոն, թէ՛ "տուրք գաղտնիք դարձուցանէ զբարկութիւն որպէս Յակոբուն Ղևսաւայն": Աւ թէ և այսու ոչ շեջանի, համբեր, զի մասն Աստուծոյ է այն 'ի վերայ քո փան մեղաց, Օ, ի ասեցեալ ի Տեառ-

նէ անկար ի բերան նորա. ըստ այնմ, "գուբ խոր է բերան անաւրինին, և առեցեալն յԱստուծոյ՝ անկցի ՚ի նա": Աստ զՄիքիայն. "բարկութեան Տեառն համբերեցից, զի մեզայ նմա": Ապա թէ աներկեղ ևս ՚ի նմանէ, թոյլ տուր անձին քո հանդիլ. որովհետև տուր թշնամւոյ քո ևմուտ ՚ի սիրտ իւր և աղեղունք նոցա վշրեցան": Ապա թէ ատորժես վրէժ առնուլ, թող այնմ՝ որ ասաց, "իմէ վրէժխնդրութիւն և ևս հաստուցից ասէ Տէր": Աւ թէ "աս մեծ է անկանիլ ՚ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ": Իսկ եթէ ոչ հանգչես, այլ բաղձաս զու ինքն փոխարէն առնուլ, զգոյշ լեր, մի՛ գուցէ զայս առնելով, ՚ի մեծագոյն փնասնորա անկանիցիս. զի իբր զշուն յանդուզն լրբեալ, յայտնապէս հակառակեցի և անբերելի լեցի. այլ թող զնա շարձարիլ յինքեան կարծեաւք և երկեղիւ առ ՚ի քէն: Վանզե իբրու գիտէ զչարութիւն անձին իւրոյ ... յերկեղե ՚ի քէն և ՚ի կասկածանա: Երդ մի՛ յայտնելով յանհոգս առնել զնա: Այլ և այսու առ մարդիկ արդար երեւեցիս և իմաստուն, և նա անգամ (գուցէ՝ անպատճառ) և անմիտ. և դատաստան անաշտ ընկալցիս աստ մարմնով ՚ի Տեառնէ, և ՚ի հանդերձեալն հոգւով և մարմնով: Այլ և իշխանին պատշաճ է իմաստութեան պարապել, ոչ գինարբուաց և լիտի երգոց, կամ ունայն զբաղմանց, խաղուց և որսոց. զի զիլք զանմիտան և զանընտել բարսն յորսոցն նշանակեն որպէս զՆերքովթին, և զԽամայէլն, և զԱսաուն՝ վայրագ և անմիտ համարելով:

Երդ ընդէ՞ր մարդ հանձարոյ և բանի հասեալ զաւր հանապաղ շանց և թռչնոց պարապելով, կրել զասացեալն՝ "մարդ ՚ի պատուի էր և ոչ իմացաւ, հաւասարեցաւ անբանից և անմտից, և նմանեցաւ նոցա":

Մինչ ցերբ կցորդ թռչնոց և գաղանաց և զախրագոյն մասն աւուրն յայն վճարել. որոց արժան էր խորհել և հոգալ զպէտս հոգւոյ իւրոյ և զաշխարհին. և մտերմութեամբ ծառայել Աստուծոյ և թաղաւորի:

Իսկ Ակեղեցական դասուցարժան է զաստուածային աւրէնս ՚ի ժամու և ՚ի տարաժամու յունկն թաղաւորի լսեցուցանել, անպատկառ և անկառ ՚ի սահման թագաւորական ուղղութեան զնա յորդորել: Աւ զաշխարհ ՚ի նոցին ՚ի հնազանդութիւն յորդորել. ուսուցանել, ծառայել մարմնաւոր Տեառն որպէս Աստուծոյ, և զամենայն հարկ և զերաւունս առանց արանջման յարքունիս վճարել: Այլ և ինքեանք նոքաւք հանդերձ արասցեն աղաւթս և պաղատանս (վասն) աշխարհի և թաղաւորի՝ պարագայց ամաւք մնալ ՚ի խաղաղութեան: Աւ այսոքիկ այսքան:

Բայց գիտել արժան է, զի երեք են իլք, որ հաստատուն պահեն զթագաւորութիւն: Առաջին այս՝ զոր գրեցաքս բարեպաշտութիւն հաւատոյ և ուղղութիւն գործոց: Աւ երկրորդ՝ սեպհական և հայրենեաւք իրաւացի ՚ի նախնեաց ունել զթագաւորութիւն:

Երդ զառաջինն վստահ գորով յԱստուածատէր և ՚ի բարեսէր կամս մեչոյ պսակաւոր Արքայիս նուիրեցելոյ, աղաւթիւք աւժանդակեցուք սմա լիով առնել զասացեալս և մշտնջենաւորել ՚ի սոցն: Իսկ զերկրորդն յայտնապէս ունելով սմա, յոյժ ծայնաւթ է մեր: Չ. ի է սա ՚ի Ռուբինեանց անտի, որ արեանառուք էին մեծի արքային Գագկայ Բագրանունոյ (այս է՝ Բագրատունւոյ) Մամիկունւոյ: Չ. ի յետ մահուան նախասացեալ Արքայիդ, եկեալ մեծն Ռուբէն ՚ի Աւսիտառա, ամբոխիւ և ժողովըր-

դովք տիրեալ անդ, հանդեաւ 'ի Վրիստոս: Ծնեալ որդի Աստուծոյն*) անուն, որ տիրեաց քահայ, և եզ տուն տէրութեան իւրոյ 'ի Հռչակաւոր զընակն Ահա հիւսյ. և կալեալ քաջութեամբ զյոյլով մասն Արիւկիս, և փոխեալ առ Վրիստոս, էառ զըշխանութիւն նորա՝ երէց որդի նորա Թորոս, ունելով ընդ ինքեան զկրտսեր եղբայր իւր զԱւոն: Սա ընդարձակեաց զըշխանութիւն հաւր իւրոյ. էառ և զմեծն Ենարզարա, և շինեաց զստաճար Տիրամաւրն՝ որ 'ի նմա, եղեալ անդ և զնորին պատկերն. և հանդեաւ 'ի Վրիստոս՝ առեալ զըշխանութիւն եղբար իւրոյ Աւոնի: Ար և ծնաւ երիս որդիս, զԹորոս, և զՍտեփանէ, և զՄլիհն. յԱղեաա զնացեալ էին առ քեռին իւրեանց, մեռաւ Աւոն 'ի Աստանդինուպաւղիս. և Թորոս եկն զկնի Պերպեաւժինաց 'ի Արիւկիս. և յեա մահուան Ապսերն յԱնարզարա յորս էրէց, իննամոցն Եստուծոյ զտեալ զեղբայրն իւր զՍտեփանէ, զարձ տիրեաց Արիւկիոյ: Աւ Ստեփանէ զնացեալ 'ի Սեաւ լեռոքն՝ ախրեաց մինչև 'ի Վերմանիկէ. և անդ մեռաւ 'ի յունաց տապակեալ: Աւ եթող երկուս որդիս զԱուրէն և զԱւոն, որ առաջին աւծաւ Թագաւոր Հայոց 'ի վերստինն նորոգման 'ի Արիւկիս: Բագում քաջութիւնս աջարեալ Թորոս, և տիրեալ բոլոր Արիւկիոյ և Սալբիոյ, հանդեաւ 'ի Վրիստոս: Աւ եղբայր նորա Մլիհ էառ զըշխանութիւն նորն. և յեա մահուան նորա, որդիքն Ստեփանէի, նախ Աուրէն, և 'ի փոխնն առ Վրիստոս, Աւոն, որ պսակեցաւ Թագաւոր Հայոց 'ի Յունաց և 'ի Հռոմայիցոց: Աւ յեա նորա զուսար նորա Չապէլ Թագուհի, Աւակեալ ընդ բարեպաշտի Հեթմոյ, որ Թագաւորեալ և

բագում բարութիւնս և ուղղութիւնս Ազգիս Հայոց ցուցեալ, ծնաւ զմերս Պսակաւորս Աւոն, որ այժմ աւծանի Թագաւոր, որպէս զի ընել մնս ըստ իշխանութեան տաներորդ յԱուրէնաց, և ըստ ծննդաբանութեան է հաւթներորդ, Թուելով զայս ձև օրինակի: Իշխան Աուրէն: Իշխան Աստանդին: Իշխան մեծն Թորոս պաւստասակաստիւսն* կոչեցեալ: Իշխան Աւոն: Իշխան Թորոս: Իշխան Մլիհ: Իշխան Աուրէն: Թագաւորն Աւոն: Չապէլն Թագուհի: Աւ Աւոն մերս նուիրեալ յաւծումն:

Իսկ ըստ ծննդեան է սա որդի Չապէլն՝ զատեր Աւոնի Արքայի, որդւոյ Ստեփանէի, որդւոյ Աւոնի, որդւոյ Աստանդեաց, որդւոյ Աուրէնի, 'ի շառաւիղէ Վաղիս, յազգէ Բագրատունւոյ, 'ի ցեղէ մեծին Վաւթայ Թագաւորի և Մարգարէի:

Իսկ զերորդն, որ նա ինքն իմաստութիւն և հանձար, այնքան ընկալեալ ունի և զընդարձակութիւն սրտի, մինչ զի իբրև զըստ արեղական՝ առ ամենեւեան քարոզեալ է՝ Ասանորոյ ինձ լուել է, զի մի Թուեցոց մարդահաճութեամբ իմն առ ախանէ խաւսել, զոր զԹութիւն Եստուծոյ պահեաց զսա զաւակ սուրբ արձանութեան, հանեալ յիրկաթի հնոցէն Ազգիպատի, լոյս ծագեաց մեզ սինըր ժողովրդեան իւրոյ. և այսօր կոչեաց յԱթոռ Թագաւորութեան տանս Թորոգման՝ Հայկազեանս զարմի, զետեղելոցս 'ի նահանգս Սալբիոյ և Արիւկիոյ, որոց ախրեալ Թագաւորէ Սա:

Ասանորոյ մտղթեցուք միաբան 'ի բոլոր սրակ, և յամենայն անձնէ և զաւրութեանէ՝ զԱրիւկաւոր Թագաւորն մեր Վրիստոս, զի շնորհեացէ՝ Աորինծայ մերոյս Թագաւորի

(*) Այս է Պատմութեան, որ է ըստ յունարէն, և նշանակէ խոյրտոպարն իշխանապետ Փառատոր:

1. Լենինի զբարեպաշտութիւն Գաւթի, զԱ-
 ղեկիոց, զՅովսիայ, զԱրտանդիանոսի, ըզ-
 թէոզոսի և զՏրդատայ, զԻմաստութիւն
 Սողոմոնի և Օւարարեղի, զԳանիէլի, և
 զՅուսիսիոց, զողորմածութիւն Աբրահա-
 մու և զՅովսիայ, զԽոնարհութիւն Իսահա-
 կայ և Իսրայէլի, զհեղութիւն Սոխիսի և
 զԳաւթայ, զքաջութիւն Սամսոնի և զՏրդ-
 դատայ, և զամենայն բարեձեռութիւնս ըստ
 նմանութեան բարեկարգ թագաւորացն որ 'ի
 հնումն և 'ի նորումս Կացցէ՛ և մնացէ՛ ա-
 նուն սորա ընդ արեւու յառաջ քան զու-
 սին՝ ազգէ մինչև յազգ: Օրագեսցի՛ յա-
 ւուրս սորա արդարութիւն, բազում խա-
 ղաղութիւն մինչև կասարեցի լուսին: Տի-
 բեցէ՛ սա 'ի ծովէ մինչև 'ի ծով, և զետոց
 մինչև 'ի ծագս աշխարհի: Առաջի սորա
 թշնամիք իւր անկցի՛ն. և զհող ոսից սո-
 րա լիկեցցէ՛ն: Գտցէ՛ սա շնորհ 'ի Տեառ-
 նէ՛ առաջի ամենայն բանաւորաց աշխար-
 հիս: Աւ զամենայն բարբառ որ յարկցէ 'ի
 վերայ սորա, 'ի պարսութիւն մասնեցէ՛
 Տէր: Արկայն ամառք և խաղաղական կեն-
 դանութեամբ թագաւորեցցէ՛ սա 'ի կեանս
 յայս ծիրանածին որդւովք իւրովք և զար-
 միւ, և 'ի հանդերձեալն սրբոց թագաւորա-
 ցըն թագակից և աթուակից եղիցի: Մի
 պակասեցէ 'ի զաւակէ սորա այր՝ որ նստցի
 յաթոռ թագաւորութեան Ազգիս Հայկա-
 զեան. այլ ըստ աւուրցն երկնի որ 'ի վերայ
 երկրի, և ընդ պայծառութեան լուսաւո՛-
 րացն՝ եղիցի՛ մշանջնաւորութիւն զաւա-
 կաց սորա և պայծառութիւն յաշխարհի, 'ի
 պատիւ և 'ի փառս Աշկեղեցւոյ Աստուծոյ և
 հաւատացելոց Վրիստոսի: Բնդ Գլխոյս շնոր
 հաբաշխութեան և ամենայն անդամոցս յար-
 մարութիւն: Ե շնորհեցի՛ յառատապարզ և
 Տեառնէ՛ մերմէ՛ Յիսուսէ՛ Վրիստոսէ՛ շնորհք

ողորմութեան և պարզեք բարութեան, Նախ
 Վահանայականս լուութեան, և Վահանա-
 յականին կատարողութեան: Մերի՛ծ Հայ-
 բապեախ մերոյ, պարկեշտ պաշտամամբ սպա-
 սաւորիկ Աստուածային խորհրդոցս յԱշկե-
 ղեցի սուրբ 'ի յերկրի: Գթութիւն Սար-
 դասէր Հողոյն Աստուծոյ հանգիցէ՛ 'ի հո-
 զիս ննջեցելոցն մերոց, և յարուսցէ՛ զնոսս
 'ի կեանս և 'ի հանգիստն յաւիտենական,
 մանաւանդ զնախայիշատակեալ նախնիս մեր
 պակասորիս, զԱորբինեանն, յորոց երա-
 նելին Օւապել թագուհի, որոց ողորմու-
 թեանն և առատ պարգեացն՝ որ առ Ոսոս-
 նականն, պատու է մերս նվաստութիւն,
 և ևս վեհագունից քան զմեզ. ընդ որում՝
 զանձառութիւնն ընկալցի փոխարէն 'ի
 հանդերձեալ հատուցման արդարոց: Աւ
 Չեզ ամենեցուն լողացդ շնորհեցէ՛ Տէր
 վարձս բարեաց. որպէս զե յամենեցունց
 փառաւորեցի միասնական սուրբ Արրոր-
 դութիւնն և մի Աստուածութիւն՝ այժմ և
 միշտ և յաւիտեան:

ԱՂԵՐՍ

ԱՌ ՀՈԳԻՆ ՍՈՒՐԲ

- Մշտածաւալ Հողիդ Աստուած,
- Յիս ծաւալեա՛ քո շնորհ,
- Ե շնորհաց քոց տուն զիս յարդարեա՛
- Ընդ մուտ գործիլ տարւոյս նոր:
- Նորոգելով մարմնոցս տապան
- Ի հնոյ մեղաց զերծ արա՛,
- Անեղական քեզ էակցին
- Ի ձօն եղէց յարակայ:
- Յուզե բարեաց նախաշաւիղ՝
- Ուղղեա՛ զգնացս բարկար,